ՀՏԴ 941 (479.25):323.2 *Հայաստանի նորագույն պատմություն*
Մ 173

Գայանե Մախմուրյան,
պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
ggmakhm@hotmail.com

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ԱՐՑԱԽԻ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (1988-1990 ԹԹ.)

Հայրենիքի հետ Արցախի միացման շարժման նվաճումները պայմանավորված են ղարաբաղցիների պաշտպանողական հաղթական մարտերով, գաղթականների և շիրակ-ցիների՝ երկրաշարժին դիմակայելու տոկունությամբ, սփյուռքի և արտերկրի աջակցութ-յամբ, փոխադրական, էներգետիկ ու լրատվական շրջափակման արգելքների համազ-գային հաղթահարումով, արդիական ու ճիշտ քաղաքականությամբ: Հայաստանում հրավիրվել են ԽՍՀՄ-ի համար աննախադեպ Մարզային ու Գերագույն խորհուրդների նստաշրջաններ, ուր ընդունվել են պատմական որոշումներ, կայացել են համազգային հանրահավաքներ, գործադուլներ, հացադուլներ, երթեր, նստացույցեր, բոյկոտի քայլեր:

Բանալի բառեր. *Արցախ, Հայաստան, Միացում, ԼՂԻՄ-ի Խորհուրդ, ՀԽՍՀ ԳԽ նստաշրջան, ազատագրական շարժում*

Г. Г. Махмурян, доктор исторических наук,
Институт истории НАН РА

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ОБЪЕДИНЕНИЯ АРЦАХА СО СВОЕЙ РОДИНОЙ (1988-1990 гг.)

Успехи движения за объединение Арцаха с Родиной обусловлены победой карабахцев в оборонительных боях, стойкостью беженцев и ширакцев в зоне землетрясения, поддерж-кой спюрка и зарубежных стран, общенациональным преодолением транспортной, энерге-тической и информационной блокады, верной и современной политикой. В Армении созвали беспрецедентные для СССР сессии Областного и Верховного советов, принявшие истори-ческие решения, состоялись общенациональные митинги, забастовки, голодовки, марши, сидячие пикеты, акции бойкота.

Ключевые слова: *Арцах, Армения, Союз, Совет НКАО, сессия Высшего совета ССР, Освободительное движение*

G. G. Makhmourian, Doctor of Sciences in History, Institute of History,
National Academy of Sciences, Republic of Armenia

HISTORICAL IMPORTANCE OF THE UNIFICATION OF ARTSAKH WITH ITS MOTHERLAND (1988-1990)

The advance of the movement for unification of Artsakh with its Motherland is provided by the victory of Karabakh Armenians in their defensive actions, by staunchness of refugees and dwellers of the Spitak earth-quake zone, by support of Diaspora and foreign countries, by the all-national overcoming the transport, energy and information blockade, as well as by appropriate and up-to-date politics. We convened in Armenia sessions of the Regional and Supreme Councils, unprecedented for the USSR, which made the historical decisions. We had also applied the general meetings, strikes, hunger strikes, marches, sit-down protests and boycott actions.

Key words. *Artsakh, Armenia, Union, NKAR Council, SSR Supreme Council Session, Liberation Movement*

1988-1990 թթ. եղել են ազգային աննախադեպ գործընթացների ու նվաճումների տարիներ, երբ՝ ի տարբերություն նախորդ անկախությանը, ոչ թե Թուրքիային ենք հանձնել մեր պետության հալալ կեսն, այլ հիմք ենք դրել Հայրենիքի աճին՝ 37 տոկոսով: Այդ ամենը հետագայում ծավալված կռվի մարտիկների՝ առաջին հերթին արցախցու խիզախությամբ և արյամբ, գաղթականների

տանջանքով, երկրաշարժից տառապյալ շիրակցու աներևակայելի տոկունությամբ, սփյուրքի ու արտերկրի լայն աջակցության, մեր բոլորիս՝ փոխադրական և էներգետիկ շրջափակման ցուրտ ու մութ տարիներին դիմակայելու, ճիշտ քաղաքականության ու պաշտպանության, կյանքն և աշխատանքը ապահովելու շնորհիվ: Հատկապես Հայաստանում են կիրառվել ԽՍՀՄ-ի համար աննախադեպ պառլամենտական նիստերն ու որոշումները, հանրահավաքներն ու երթերը, գործադուլ ու նստացույց, հացադուլն ու «մեռյալ քաղաք» բոյկոտի ձևը, մտավո-րականության, հայտնի գիտնականների և կոլեկտիվների քարոզչական աշտանքը: Սա թույլ է տվել պատռել տեղեկատվական զրպարտանք ու շրջափակումը, ոչ թե պարզա-պես փոխել, այլ **լավացնել** իրավիճակը, առաջ է բերել աշխարհի զարմանքը, հիաց-մունքը, լայնածավալ արձագանքը, սփուռքի և արտերկրի այդքան հարկավոր աջակ-ցությունը:

Ազգային շարժումը ուղեկցվել է բազում բարդագույն խնդիրներով, որոնք ստիպ-ված էինք լուծել ոչ թե փոխ առ ախ, այլ **միաժամանակ**: Նրանցից յուրաքանչյուրը՝ բնակ-չության անվտանգությունն և ինքնապաշտպանությունը, հողի մասնավորեցումը, լա-յնածավալ սեփականաշնորհում ու փողի արժեքազրկումը, բոզմակուսակցական հա-մակարգը, բազմակարծիքությունն և անկախ պետականության ձևավորումը, գաղափա-րախոսական ու քարոզչական նոր սկզբունքները, հետագայում արդյունաբերության, առևտրի, բժիշկական ու կրթական համակարգերի արմատական ձևափոխումը բավա-կան էր՝ պատմության էջերում գրվելու համար:

Համազգայն շարժման համար բոլորից բարդ պրոբլեմը սեփականաշնորհումն էր, քանի որ հավաքական և իր էությամբ պետական պահանջը դեմ էր առնում զուտ ան-հատական շահին: Միաժամանակ ազատագրական պայքարը՝ իր սկզբունքորեն նոր ձևերով ու ժողովրդավար ոճով, պետք է դիմակայեր հին՝ անցյալում էլ արդեն հնացած ու պարտություն ճաշակած կաղապարներ նրան թելադրելու ձգտումներին: Պաշտ-պանությունը պահանջում էր միանձնյա ղեկավարություն, բայց ժողովրդական կռիվը՝ անհատի նախաձերնություն: Այդ՝ պրոֆեսիոնալ ու զանգվածայն, կամավոր ուժերի համադրումը, դարձել է Արցախի իշխանության կարևոր նվաճումներից մեկը:

Մեր հաղթանակը անհնար էր առանց բանիմաց անձանց ու ազատ նախաձեռ-նության, առանց բոլոր հասարակական ու պետական համակարգերի լիարժեք գործու-նեության: 1988-1990 թթ. աննախադեպ հասարակական մթնոլորտի տարիներն էին, երբ Մոսկվայի վերադաս մարմինների հետ իրավացիորեն ու անհրաժեշտաբար խոսում էինք պաշտոնական եզրույթների լեզվով, իսկ տեղեկատվական շրջափակումը պատ-ռում էինք ժողովրդական միջոցներով ու հասցեատերերին հասկանալի լեզվով: Պաշ-տոնական կարգախոսներ կիրառելը միամտություն չէր, այլ մեր պայմանների ճիշտ ընկալում: Դա միակ գրավականն էր մեր շարժումը ի սկզբանե ջարդից պահպանելու համար:

Մեր գործի դրած ժողովրդավարությունը թույլ իշխանություն չի նշանակում: Նա միայն ընտրությունների վրա հիմնված պետական համակարգ է, որը վտանգավոր է փոխարինել հարկադրանքի (դիկտատուրայի) իշխանաձևով: Վերջինը անկասկած հար-մար է գործադիր ասպարեզում, բայց զգալիորեն թուլացնում է մարդկային գործոնը: Իսկ փոքր հասարակության համար հարկավոր է ներգրավել նրա բոլոր առկա ուժերը: Ընդ-գծեմ. ժողովրդավարության արդիական եղանակը հատկապես օգտակար է ճգնաժամի պայմաններում: Նրա շրջանակներում անձն իրեն ավելի ուժեղ է զգում (empowerment), դրսևորելով կապիտալիզմի գերազանցությունը ավատատիրության նկատմամբ: Եվ պատահական չէ ԽՍՀՄ ԿԿ քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի որոշման մեջ կատար-ված այն գրությունը, թե «Մենք գործ ունենք ինչ-որ բացարձակ նոր բանի հետ»:

1988-1990 թվականներին բնորոշ էր հակասությունը տեղական ու կենտրոնական վարչական օղակների միջև: Այդ պայմաններում Հայաստանը՝ իր ազգային հարցի պամ-տության մեջ առաջին անգամ, բուն **խնդրի հետ միասին բերել է** իր մշակած, միանգա-մայն իրականանալի **լուծումն** ու անմիջապես անցել է բարձրացրած խնդրի կարգավոր-մանը: Նախորդ ժամանակների կրավորական առարկայից վերածելով պետության, բանակցությունների գործունյա և պատասխանատու կողմին: Առկա օրենքներ գործա-դրելը, միջազգային իրանվունքին հետևելը դարձել է Միացման շարժման նորություննե-րից ու առավելություններից մեկը: Այն բերել է հստակ հիմնավորում, որոշակի պաշտ-պանություն, արտերկրի համակրանք և ապահովել է մեր դրական, արտաքին աշխար-հին հասկանալի կերպարը: Այժմ և ապագայում չափազանց կարևոր է

հակասության մեջ չմտել միջազգային օրենսդրական կանոնների հետ։

Քարոզչության որորտում ամենից մեծ դժվարություն է ստեղծել 1) անկախության ու Միացման դրույթների համադրումը։

Հատկապես ողջունելի է և վերջանական հաջողության հիմք է հանդիսանում այն հիմնադրույթը, թե Արցախի Հայաստանին վերամիավորվելու որոշումը մինչ հիմա չի կորցրել իր նշանակությունը և իրավական ուժը։ Մոսկվայից դրդված անկախության պահանջների բացակայությունը բոլորովին էլ թուլություն չէր։ Ցավոք, անկախ կարգա-վիճակը՝ ինքն իրեն, մեզ հնարավորություն չի տալիս ինքնուրույնորեն ապահովել բնակչության ֆիզիկական անվտանգությունը։ Սա է նախորդ՝ ՀԽՍՀ կարգավիճակի ընդունելի լինելուն գլխավոր պատճառ էր։ Երբ կենտրոնը ցույց տվեց մարդկանց նրանց պաշտպանության բացակայությունը երկրի ներսում, դրա հետ միասին աճեց անկա-խության գրավչությունը։

Հայաստանի համար անկախությունը շահավետ չէր երկրաշարժի, գաղթակա-նության ու լիակատար շրջափակման պայմաններում։ Բայց Մոսկվայի երկու տարվա անգործությունը շրջափակումը վերացնելու խնդրում, երբ միութենական հանրապե-տություններից մեկը մեկուսացվել էր մնացած պետությունից, կենտրոնի ազգային հատկանիշով մարդկանց անպաշտպան թողնելու քմայքը պարզապես ստիպել են Հայաստանին ընդունել նրա փաստացի վիճակը։ Այդպես որ անտեղին է և անհնարին 1988-1990 թթ. ՀԽՍՀ հասարակական ու պաշտոնական ղեկավարներին մեղադրել իրենց ռազմավարության համար։ Այն հեռու էր միամիտ լինելուց։

Հետևաբար, նա երբեք չէր պայքարում ԽՍՀՄ քանդողի կասկածելի «վաստակի» համար՝ հետագայում քավության նոխազի չվերածվելու մտահոգությամբ։

Նկատի ունենանք. Միացումն ու անկախությունը հանդիսանում են երկու տարբեր գաղափարախոսություն ու քարոզ։ Առաջինն շեշտադրում է ինտեգրացիայի, մյուսը՝ անջատվելու ձգտումը։ Այդպես որ անկախության պայմաններում՝ որն բարեկեցության կամ անվտանգության երաշխիք չէ, օգտակար կլինի ընգծել պետականության, այն է՝ ողջ հասարակության հավաքական շահի հանգամանքը։ Մենք հասկանում ենք, ոչ միայն Արցախը, այլև Հայաստանն ամբողջությամբ. եվրոպական կամ ասիական շատ պետությունների նման պետք է օգտվի միջազգայի քաղաքական ու ռազմական կառույց-ների ներուժից։

Այդ առումով, մնացած Հայաստանից մեկուսացված արցախցու խաղաղ կյանքն անհնարին է, և միայն Հայաստանի Հանրապետությունը վստահաբար և արագ կանգ-նելու է նրա պաշտպանպությանը։ Մենք արդեն նշել ենք անկախ կարգավիճակի սահ-մանափակ հնարավորությունը։ Սակայն դա բերում է նաև երկու կարևոր առավելութ-յուն, որոնք անհամեմատելի լայն նախաձեռնության կարելիությունն ու քո շահի միջազ-գայի հրապարակային ներկայացումն են։ Այդպես որ անկախությունը երաշխիք չէ, այլ հնարավորություն է։ Եվ արձանագրենք. ի վերջո, արդիական անկախությունը կայացել է հատկապես արցախյան պայքարի սերնդի ջանքով։

Այնուհետև արաջնային նշանակություն ունեն թշնամու կողմից տարածվող հետևյալ դրույթների մերկացումը։

1) Թ. դե Վաալի հայերին իբր առաջիններ բռնություն կիրառած նկարագրությունը։ Վերջինը՝ Մ. Գորբաչովի ֆոնդի փաստազուրկ պնդումից բացի, ուրիշ հիմնավորում չի բերում։ Ի տարբերություն Սումգայիթի, Կապանին առնչվող կեղծարարությունը չունի որևէ իրական ապացույց՝ լուսանկարներ, կինոժապավեններ, Բաքվի ոստիկանների կամ ԽՍՀՄ-ի հսկիչ մարմիններում արձանագրած վկայություններ, բժիշկական գրա-ռումներ և այլն[1]։ Նժարի մեկ հարթության վրա ամեն ինչ դնող կենտրոնը չկարողացավ Կապանի մեղադրանք բերել՝ որպես Սումգայիթյան դատավարության հակակշիռ։ Քանի որ Ադրբեջանի ագրեսոր լինելն ու հայերի ինքնապաշտպանության դիմելու հանգա-մանքը ունի գնահատականի ու քաղաքական նշանակություն, հարկավոր է մշտապես ընդգծել, որ հայ ժողովուրդը օգտվում էր ինքնապաշտպանության ու սահմանադրա-կան իր բոլոր իրավունքներից։ Հետևաբար, տեղին է

[1] Տես օրինակ. Союз можно сохранить. М., 1995 և Թ. դե Վաալ, Սև այգի, Եր., 2014, էջ 45; Բ. Ուլուբաբյան, Արցախյան պայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 35։

պահանջել դե Վաալից նրա փաս-տազուրկ պնդումների հերքում կամ դատական հայտ ներկայացնել:

2) Սումգայիթի ջարդը արտացոլում էր Ադրբեջանում տիրող կոռուպցիայի և ազգայնամոլության սանձարձակությունը: Այդ քաղաքում իրականացված եռօրյա կոտտանքը հայերին օրենքից դուրս է մղել ԽՍՀՄ-ի որոշակի մասում, այնուհետև հանգել է Բաքվի էլ ավելի սարսափելի կոտորածին ու ամբող Ադրբեվանի հայաթափման: Սում-գայիթի օրերին միութենական պետությունը փաստորեն հրաժարվել է իր պարտակա-նությունից այդ քաղաքի բնակչության նկատմամբ: Նա իր ցանկությամբ էր պաշտպա-նում, կամ չէր պաշտպանում անձի կյանքն ու սեփականությունը: Սա ճանապարհ էր հարթում ջարդերի ծավալմանն, իսկ հայերի պաշտպանությունը դառնում էր օրինական և հիմնավոր: Նույնը վերաբերվում է նաև Գանձակի հարձակումների բնորոշմանը:

3) Խոջալուն: Առայսօր այդ թեման շոշափելը վկայում է մեր քարոզչության թե-րության մասին: Տարբեր հրապարակումներով ու բազմազան պաշտոնական ելույթ-ներով մենք վաղուց պետք է փակեինք այդ հարցի անտեցի շահառկումն ադրբեջանա-կան օղակների կողմից:

4) Այնինչ՝ Ադրբեջանն ու 1988-1990 թթ. միութենական կենտրոնը աշխատում էին նույնացնել Հայաստանը ջարդարարին, առայսօր այնտեղ ճգնում են նսեմացնել ու հանցավոր ներկայացնել մեր հասարակությանը՝ պետական կառույցով ու համազգային շարժումով հանդերձ, ժխտել ժողովրդի նախորդ 70 տարիների բոլոր նվաճումներն կամ նրանց վերագրել կոմունիստական կուսակցությանը:

5) Վիթխարի և բազմակողմանի աշխատանք է տարվել, որպեսզի 1918-1920 թթ. Հանրապետության փորձը պարտադրվի 1988-1990 թթ. և արդի հասարակությանը, որ-պեսզի այն լինի ոչ թե ուսումնասիրելու նյութ, այլ պարտադիր, կրկնման ենթակա մի կաղապար: Նման գնահատականն ու արդիական հարցերի աղավաղումը կոպտորեն խախտում է արժեքների ամբողջ համակարգը: Այն ոչ միայն ժխտում է մեր պայմանների բոլոր առանձնահատկություններն ու ներկա հնարավորություններն, այլև նենգափո-խում է, անտեղի ու ծայր աստիճանի վնասակար կերպով անտեսում է մեր օրվա հաղ-թանակած հերոսներին: Փառաբանելով 1920 թ. ապաշնորհ վարքագիծը՝ կուսակցական դիկտատուրայով, արտաքին միակողմանի կողմնորոշումով, պատերազմի անպատվա-բեր ընթացքով, դրանից բխող ծանր պարտությամբ ու մեր երկրի կեսի կորուստով հանդերձ, մենք ապակողմնորոշում ենք հասարակությանը, առաջ բերելով նրա արդա-րացի ժդգոհությունն ու պետական մարմիններից օտարացումը:

Այնինչ, 1988-1990 թթ. ու հետագա պատերազմը պարունակում են ոչ միայն բարձրագույն գովեստի արժանի սխրանքներ, այլև ԼՂԻՄ-ի ու ՀԽՍՀ-ի համագործակ-ցության ու փոխլրացման կարևոր փորձ, պաշտոնական, հասարակական, քաղաքական, քարոզչական ու զինյալ գործոնների սերտ ձուլվածք: ՀԽՍՀ-ն ունեցել է ոչ միայն ավելի մեծ տարածք ու բնակչության քանակ, քանց թե ինքնավար մարզը: Խորհրդային Հայաս-տանը պարունակել է ռազմական արդյունաբերություն, արտերկրի հետ լայն շփում, միութենական հանրապետությանը բնորոշ ավելի ընդարձակ ու բազմատեսակ կապերը միութենական կենտրոնի հետ, Գիտությունների ակադեմիա՝ Մեծամորով, արագացու-ցիչներով, տիեզերքում գործող սարքերով ու հզոր հասարակագիտությամբ, ինժեներա-կան ու բժիշկական կադրեր, օգագնացություն և որակյալ բանվորներ, արտերկիր հեռարձակվող լրատվական համակարգ ու կենտրոնի աշխատառճից լավատեղյակ վարչական համակագմը:

Հասկանալի է որ այդ ամենը չի ունեցել 1918–1920 թթ. Հանրապետությունը, որի միջազգային իրավական ճանաչումը կարճ ժամանակում հանգել է քեմալական Թուր-քիայի հարձակման ու նրա դեմ վարած ծանր, կործանիչ պատերազմի:

1988 թվականին՝ խախուտ և անորոշ պայմաններում, Արցախը համազգային ողջ շարժմանը բերել է զարմանակի կազմակերպվածություն ու եռանդ, խիզախություն, տոկունություն, քաղաքական բարձր գիտակցություն ու Հարենիքին անձայրածիր նվիր-վածություն: Երբ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան առաջ է շարժել Գերագույն խորհրդի միջոցով մեր խնդիրը խաղաղ և օրինական ձևով ներկայացնելու առաջարկը, նիստի օգտակար լինելը ընդունվեց ինչպես Հանրապետության կուսակցական օղակում, այնպես էլ Ստեփանակերտում: Այդ հավանությունը ստանալուց հետո Մարտակերտն ու Հադրութը առաջինն են, որ իրականացրել նման մոտեցումը: Եվ, անկասկած, Արցախի կազմակերպչական ուժերն առաջինն էին, որ հասկացել ռազմական պայքարի անխուսափելիությունը ու դիմել են զինված պաշտպանության՝ որպես դառը անհրաժեշ-

տությանը:

Դիմելով ամենաարդիական, ժողովրդավարական, այն էլ արևմտյան հասարա-կությանը բնորոշ քաղաքական պայքարի ձևերին, ԼՂԻՄ-ն ու ՀԽՍՀ-ն միասին ապա-հովել են պաշտոնական, հասարակական, քարոզչական ու զինյալ գործոնների ձուլ-վածքը: Նույնիսկ 1937 թ. տեսած մտավորականության սերունդը, որոնք կրում էին դաժան ճնշումների բայց և 1945 թվականի հաղթանակի ոգին. դերասան, բանաստեղծ ու գրողներ, լրագիր ու մանկավարժ, գիտնականները՝ այդ թվում պատմաբաններ, անձ-նուրաց պաշտպանում էին վտանգավոր ու այն պահին անկանխատեսելի Միացման գործը:

Արցախցու 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումը անհույս էր առանց ամբողջ հայ ժողովուրդի ջանքի: Խորհրդային Հայաստանի վիթխարի մասնակցությունն միայն որ խանգարել է Արցախի դեմ ծայրահեղ պատժամիջոցների կիրառման ու ապա-հովել է ընդհանուր զինյալ շարժման դրական ավարտը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի, 1989 թ. դեկտեմբերի 1-ի նրա և Արցախի Ազգային Խորհրդի համատեղ որոշումներից առայսօր, ողջ Հայաստանն է հանդիսանում այս մեր երկրա-մասի պաշտպանության միակ հուսալի երաշխավորը: Առանց մեզ բոլորիս Ադրբեջա-նին դիմակայելու նրա ուժերն՝ 1989 թ. օգոստոսի 16-ին կայացած Ազգային խորհրդի որոշումով հանդերձ, անբավարար են: Սա պարտական ենք իմանալ:

Այսօր հնարավոր է ասել, որ հատկապես ռազմական դաշտում՝ հարազատ օջախ-ներ պաշտպանության ժամանակ ցուցաբերած արիության, հասարակական տոկունութ-յան, նախաձեռնողության և ամրության, մեր գործելակերպի արդիական լինելուն, ինչպես և քաղաքական շրջահայացության ծուլվածքը ապահովել է կրկնակի ավելի մեծ դրական արդյունք, քան կարելի էր ենթադրել սկզբնական փուլում: Խորը հարգանք ու պատիվ արցախցուն, մեր ողջ հասարակությանը՝ Հայրենիքում ու սփյուռքում, որն զար-մանալի, արժեքավոր ու այդքան բովանդակալից էջ է լրացրել հայ ժողովրդի ու Հայաս-տանի պատմության մատյանում: